 86. West C.P., Tan A.D., Shanafelt T.D. Association of resident fatigue and distress with occupational blood and body fluid exposures and motor vehicle incidents // *Mayo Clin. Proc.*, 2012, V. 87, N 12, P. 1138–1144
 87. Wiederhold B., Cipresso P., Pizzioli D. et al. Intervention for physician burnout: a systematic review // *Open Med.*, 2018, V. 13, P. 253–263
 88. Windover A.K., Martinez K., Mercer M.B. et al. Correlates and outcomes of physician burnout within a large academic medical center // *JAMA Intern. Med.*, 2018, V. 178, N 6, P. 856–858
 89. Yates S.W. Physician Stress and Burnout // *Am. J. Med.*, 2020, V. 133, N 2, P. 160–164. doi: 10.1016/j.amjmed.2019.08.034

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ «ԱՅՐՈՒՄԸ» ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ (ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Ավետիսյան Գ.Ա.¹, Վարդանյան Գ.Զ.¹, Մելիք-Անդրեասյան Գ.Գ.², Խուզատյան Ա.Ա.³, Բայրամյան Թ.Լ.¹, Ջանոյան Գ.Զ.¹, Սանահյան Ա.Ա.¹, Պորկշեյան Զ.Ա.¹

¹ ԵՊԲՀ

² ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

³ Կ. Եսայանի անվ. պոլիկլինիկա ՓԲԸ

Բանալի բառեր՝ մասնագիտական այրման համախտանիշ, բժիշկ, միջին բուժանձնակազմ, սթրես, բժշկական օգնության որակ, բժշկական սխալներ, COVID-19:

Այս հոդվածում վերլուծվել է տարբեր աշխատանքային փորձ ունեցող և տարբեր մասնագիտությունների բժիշկների, այդ թվում՝ Նաև միջին բուժանձնակազմի մասնագիտական (Էմոցիոնալ) այրման համախտանիշի (ՄԱՀ) վերաբերյալ գրականությունը: Ներկայացվում է աշխարհում այս խնդրի առաջացմանը և ուսումնասիրությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև տվյալներ համախտանիշի զարգացման վրա ազդող գործոնների մասին: ՄԱՀ-ը օրգանիզմի ռեակցիան է, որն առաջանում է մասնագիտական սթրեսի երկարատև ազդեցությամբ: Հիմնական պատճառը հոգեբանական գերբեռնվածությունն է: ՄԱՀ-ը հոգեբանական պաշտպանություն է՝ Էմոցիաների ամբողջական կամ մասնակի բացառմամբ՝ ի պատասխան հոգեցնցումային

ազդեցությունների: Արդյունքում առաջանում է Էմոցիոնալ վարքի կարծրատիպ, երբ Էմոցիոնալ այրումը բացասաբար է անդրադառնում մասնագիտական գործունեության կատարմանը և բուժաշխատողների շրջանում մասնագիտական սխալների հաճախականությանը: Այս առումով ՄԱՀ-ի խնդիրն ուղղակիորեն պայմանավորված են ոչ միայն բուժաշխատողների կյանքի որակով, այլև անմիջական ազդեցություն ունեն բժշկական օգնության որակի վրա: Անհատական, միջանձնային և կազմակերպչական մակարդակներում այրման համախտանիշի կանխարգելման համակարգի միջոցառումները մեծացնում են մասնագիտական մոտիվացիան, նվազեցնում աշխատանքային սթրեսը, օպտիմալացնում են հոգեֆիզիոլոգիական վիճակը, հավասարակշռում ֆիզիկական և հոգեհուզական ծախսերը, բարձրացնում աշխատանքից բավարարվածությունը:

SUMMARY

PHYSICIANS' AND NURSING STAFF'S PROFESSIONAL BURNOUT AS AN ACTUAL MEDICAL PROBLEM (LITERATURE REVIEW)

Avetisyan G.A.¹, Vardanyan G.Z.¹, Melik-Andreasyan G.G.², Khuzatyan A.A.³, Bayramyan T.L.¹, Janoyan G.Z.¹, Sanahyan A.A.¹, Porksheyanyan Z.A.¹

¹ YSMU

² SNCO "National Center for Disease Control and Prevention" of MoH

³ CJSC Polyclinic named after K. Yesayan

Keywords: professional burnout syndrome, physician, nursing staff, stress, medical service quality, medical errors, COVID-19.

This article is dedicated to the literature review of professional (emotional) burnout syndrome (PBS) among physicians and nursing staff with various specializations and experience. It contains information on the occurrence of the syndrome, how long the issue has been explored in the world so far, and the factors that have led to the syndrome development. PBS is the reaction of the body to continuous professional stressors. The main factor is mental exhaustion. PBS is a type of psychological defense in the form of the partial or total suppression of emotions in response to psycho-trauma. As a result, a common emo-

tional behavior emerges among physicians, where emotional burnout starts having adverse effects on professional activity and increases frequency of medical errors. In this regard, not only does the PBS affect the lives of medical staff, but it also has a direct impact on the quality of medical services. The PBS prevention measures on individual, interpersonal and organizational levels lead to increased professional motivation, decreased tension at work, optimized psychophysiological condition, an equilibrium of physical and psycho-emotional costs, and increased level of professional satisfaction.

<https://doi.org/10.56936/18291775-2023.35-55>

ՀՏԴ՝ 613.31

ՍԻԼԻՑԻՈՒՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Քոթանյան Ա.Յ.¹, Սկրտչյան Ա.Մ.¹, Քոթանյան Մ.Յ.²

¹ ԵՊԲՀ, հիգիենայի և Էկոլոգիայի ամբիոն

² ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ստացված է՝ 12.12.2022, գրախոսված է՝ 26.01.2023, ընդունված է՝ 28.04.2023

Բանալի բառեր՝ սիլիցիում, կենսաբանական ազդեցություն, խմելու ջուր, սննդամթերք, հիգիենիկ նորմավորում:

Բնության մեջ Վ.Վերնադսկին կարևոր տեղ էր հատկացնում սիլիցիումին՝ որպես կարևոր կենսատու էլեմենտներից մեկին: Նա նշում էր, որ ոչ մի կենդանի օրգանիզմ չի կարող նորմալ զարգանալ սիլիցիումի անբավարար լինելու դեպքում: Ոչ միայն ծովային կենդանիները, որոնցից շատերի կմախքում սիլիցիումի մեծ քանակ կա, այլև ցամաքային կենդանիները և բույսերն ունեն այս էլեմենտի կարիքը: Կենդանիների դեպքում այն կազմում է շարակցական հյուսվածքի (աճառ, կապան) հիմքը, ինչպես նաև առկա է կմախքի, մաշկի, բրդի և մազերի կազմում: Բույսերի մեջ այն հատկապես շատ է արտաքին շերտերում, սերմերի թաղանթներում, մրգերի և բանջարեղենի կեղևներում: Ամրություն և ճկունության համադրությունն ապահովելը բնորոշ է առաջին հերթին սիլիցիումին [3]:

Սիլիցիումը կիրառվում է արդյունաբերական բազմաթիվ ոլորտներում, որպես հավելում ներառվում է սննդի և խմիչքների արտադրության մեջ: Արդյունքում մարդիկ առնչվում են սիլիցիումին ինչպես շրջակա միջավայրի ազդեցությամբ պայմանավորված, այնպես էլ որպես սննդային բաղադրիչ [30]:

Այս աշխատանքի նպատակն է ուսումնասիրել վերջին տարիների գիտական գրականության այն աղբյուրները, որոնք վերաբերում են շրջակա միջավայրում, խմելու ջրում և սննդում սիլիցիումի պարունակությանը, օրգանիզմում այս էլեմենտի փոխանակությանը, հնարավոր կենսաբանական ազդեցությանը, ինչպես նաև ներկայացնել տվյալներ տարբեր երկրների բնակչության շրջանում Si-ի օգտագործման քանակների և առաջարկվող սննդային

մակարդակների, խմելու ջրում Si-ի նորմավորման վերաբերյալ:

Երկրակեղևում տարածվածության առումով սիլիցիումը 2-րդն է թթվածնից հետո: Այն տարբեր քանակներով միշտ առկա է ջրում և սննդում: Si-ի միացությունները հանդիպում են բոլոր ջրաղբյուրներում. դրանք լուծելի աղերն են (կալիումի և նատրիումի սիլիկատները), կոլոիդային միացությունները (սիլիկաթթու) և կախված միացությունները (ավազ և կավ): Si-ի պարունակությունը գետերում տատանվում է 1-20 մգ/լ-ի, իսկ ստորգետնյա ջրաղբյուրներում 5-40 մգ/լ սահմաններում [2]: Si-ը շատ տարածված է հողում և կա բոլոր օրգանիզմներում, այդ թվում բույսերում: Այն առանցքային դեր ունի բույսերի աճի և զարգացման համար. կուտակվելով բույսերի հյուսվածքներում՝ պաշտպանում է դրանց տարբեր տեսակի բիոտիկ և աբիոտիկ սթրեսային ազդակներից: Հողում և բույսերում Si-ի պաշարները մարդու սննդային հիմնական աղբյուրներն են: Լավ սնունդը սկսվում է հողից (Good Nutritional Diet Begins with the Soil) [13]: Այս էլեմենտը սննդամթերքում գտնվում է սիլիցիումի դիօքսիդի (SiO_2) և սիլիկատների ձևով [19]:

Si-ի հիմնական պահանջը մարդն ապահովում է հատիկային կուլտուրաներով՝ բրնձով, ցորենով, վարսակով և գարիով (30%): Si-ի ավելի մեծ քանակներ առկա են բուսական ծագման մթերքում, ավելի հարուստ են վարսակի փաթիլները և գարին (համապատասխանաբար 3910-4310 և 2610-2720 մգ/կգ) [34]: Si-ի նշանակալի քանակներ կան նաև բանջարեղենում և մրգերում, հատկապես լոբում, ոսպում և բանանում: Մսամթերքում և կաթնամթերքում Si-ի պարունակությունը նշանակալի քիչ է [41]: Սակայն Si-ի մակարդակները սննդամթերքում նվազում են վերամշակման գործընթացներում: Համաձայն մի շարք հետազոտությունների՝ տարբեր երկրներում բնակչության կողմից Si-ի ընդունումը ըստ միջին օրական քանակների, կարելի է դասակարգել այսպես. ԱՄՆ < արևմտյան երկրներ < Ճապոնիա < Չինաստան < Հնդկաստան: Հնդկաստանում և Չինաստանում Si-ի

* ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵ

Ա.Յ. Քոթանյան

ԵՊԲՀ, հիգիենայի և Էկոլոգիայի ամբիոն

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0025, Կոթյունի 2

Էլ. փոստ՝ kotanyan.armin@gmail.com

Հեռ.՝ (+374) 93 18 44 19

ընդունման շատ բարձր մակարդակները կարող են պայմանավորված լինել բրինձ շատ օգտագործելով [13]:

Օրգանիզմ անցած Si-ի մոտ 20%-ը ստացվում է խմելու ջրից և տարբեր ըմպելիքներից (այդ թվում գարեջրից, որը պարունակում է միջինը 20-25 մգ/լ Si): Ստամոքսաղիքային միջավայրում այն ամբողջովին չի ներծծվում, կենսահասանելիությունը պայմանավորված է սննդում առկա միացությունների լուծելիությամբ [19]: Տարբեր մթերքներից Si-ի յուրացման առումով առանձնանում են գարեջուրը (64%), թարմ լոբազգիները (44%), իսկ բանակից յուրացումը կազմում է ընդամենը՝ 4% [48]: Օրթոսիլիկաթթուն կենսահասանելի սիլիցիումի հիմնական տեսակն է [30, 42]: Այլումինասիլիկատների դեպքում արսորեցիան կազմում է 1%, իսկ օրթոսիլիկաթթվի դեպքում, որն առաջանում է նաև ստամոքսաղիքային միջավայրում սիլիցիումի երկօքսիդի հիդրոլիզի արդյունքում, 30-80%: Արդյունքում օրգանիզմում յուրացվում է ջրով և սննդով օրգանիզմ անցած Si-ի մոտ 50%-ը [2]:

Տարիքին զուգընթաց սիլիցիումի յուրացման ունակությունը կտրուկ վատանում է, շարակցական հյուսվածքում այն սկսում է փոխարինվել կալցիումով, իսկ էկլոզիական անբարենպաստ միջավայրերում նաև ստրոնցիումով. մարմինը կարծես կորցնում է ճկունությունը, դառնում է փխրուն, հատկապես հոդերը. մարդը կամ կենդանին ասես քարանում են: «Յոդ ուտել չի լինում, սակայն սիլիցիում ինչ որ տեղից պետք է ստանալ» նշում է Վ. Ա. Տուտելյանը: Յեղինակն այս դեպքում լավագույն միջոց է առաջարկում «Զերմուկ» հանքային ջուրը, որն աչքի է ընկնում սիլիցիումի մեծ պարունակությամբ [3]: Արյան պլազմայում Si-ի մակարդակի և տարիքի միջև հակադարձ կապ է հաստատվել մի շարք հետազոտություններում, ընդ որում՝ ավելի բարձր խտություններ դիտարկվել են նորածինների և փոքր երեխաների, ավելի ցածր՝ դեռահասների և չափահասների շրջանում [50, 18, 35]:

Բարձրակարգ կենդանիների և մարդկանց համար սիլիցիումը ընդհանուր առմամբ էսենցիալ սննդանյութ է: Այնուամենայնիվ, շարունակվում են կուտակվել համոզիչ ապացույցներ, որ սիլիցիումը կենսաակտիվ միկրոէլեմենտ է [33]: Մարդու մարմնում Si-ի պարունակությունը կազմում է 1-2 գ [19, 34]: Ավելի շատ քանակներ հանդիպում են ոսկրերում և այլ հյուսվածքներում, մաշկում, եղունգներում, ջլերում, աորտայի պատում և երիկամներում [34]: Չնայած իր պարունակությամբ այս միկրոէլեմենտը օրգանիզմում զիջում է միայն երկաթին և ցինկին, այնուամենայնիվ ֆունցիոնալ նշանակությունը, կենսաբանական դերը,

մետաբոլիզմի առանձնահատկություններն առ այսօր անհասկանալի են [19, 30, 37]:

Մի շարք ոչ վաղ ուսումնասիրություններ վերաբերել են օրգանիզմ սննդի միջոցով սիլիցիումի անցմանը, տեղափոխմանը, պահպանմանը և հեռացմանը: Այդ հետազոտությունները ցույց են տալիս, որ Si-ի փոխանակությունը կարգավորվում է օրգանիզմով և վկայում են բարձրակարգ կենդանիների և մարդու օրգանիզմում պոտենցիալ կարևոր նշանակության մասին: Միջին հաշվով օրգանիզմ անցած Si-ի 41%-ը հեռանում է մեզի միջոցով, որը արսորեցիայի ցուցանիշ է [19]. Արյան մեջ Si-ի խտությունը՝ սննդակարգով պայմանավորված հարաբերականորեն կայուն է [41]: Պլազմայում Si-ի մակարդակը տատանվում է 100-310 մգ/լ-ի սահմաններում. այն կարելի է համարել որպես Si-ի փոխանակության ցուցանիշ [36]. Արսորեցված Si-ի որոշ քանակներ տեղափոխվում են հյուսվածքներ, այն առկա է բոլոր հյուսվածքներում, այդ թվում ուղեղում, սակայն ավելի մեծ քանակներով՝ շարակցական հյուսվածքում, այդ թվում աորտայում, ոսկրերում, մաշկում, ջլերում և տրախեայում [19]: Արյան մեջ շրջանառող Si-ը (սիլիկաթթու) սպիտակուցների հետ կապված չէ և հեռանում է երիկամներով [42]: Արսորեցված Si-ի մեծ մասը 4-8 ժամվա ընթացքում արտազատվում է մեզով, ենթադրաբար որպես օրթոսիլիկաթթու կամ մագնեզիումի օրթոսիլիկատներ [19]: Այսպիսով, մեզով այս էլեմենտի էքսկրեցիան կլանման մարկեր է և միևնույն ժամանակ վկայում է դրա կենսահասանելիության մասին [39]: Ստացվում է, որ երիկամները հանդես են գալիս որպես այս էլեմենտի հիմնական կարգավորիչը օրգանիզմում, միևնույն ժամանակ օրվա ընթացքում Si-ի շարունակաբար 14 մգ-ից պակաս արտազատումը կարող է վկայել անբավարար օգտագործման մասին, քանի որ համաձայն դիտարկումների՝ նման քանակներով օրգանիզմից հեռացումը այն դեպքերի համեմատ, երբ էքսկրեցիան կազմել է 40 մգ/օր, պայմանավորված է մարդկանց շրջանում ոսկրերի հանքային խտության ցածր ցուցանիշներով [19]: Այն վկայում է նաև, որ սիլիցիումի բարենպաստ ազդեցությունը պայմանավորված է դոզայով:

Մի շարք գիտնականներ նշում են, որ խիստ անբավարար են այն տվյալները, որոնցով կարող են բացատրվել օրգանիզմում Si-ի հոմեոստազը ապահովող կենսաքիմիական մեխանիզմները: Նրանք իրենց փորձարարական ուսումնասիրությունների արդյունքում հայտնում են կաթնասունների դեպքում Si-ի արտահոսքի փոխադրիչի նույնականացման (հոմեստիֆիկացման) մասին, այն է՝ Slc34a2 (solute carrier family 34 (sodium phosphate), member 2),

նատրիում-ֆոսֆատի հայտնի փոխադրիչը, որը վերականգնված է առնետի երիկամներում դիտվել Si-ի քրոնիկական անբավարարությունից հետո: SiC34a2-ը իրականացնում է երիկամային խողովակների էպիթելային բջիջներից օրթոսիլիկատների արտազատումը արյան մեջ, այսինքն՝ մասնակցում է երիկամներում Si-ի ռեաբսորբցիային [40]: Սակայն այս դեպքում որպես անխուսափելի հետևանք ավելանում է մեզոլ ֆոսֆատների արտազատումը. այն դիտարկվել է առնետների դեպքում դիտվել Si-ի քրոնիկական անբավարարության պայմաններում [20]:

Կան մի շարք աշխատանքներ տարբեր երկրների բնակչության շրջանում Si-ի օգտագործման քանակները որոշելու վերաբերյալ: Այսպես՝ համաձայն ուսումնասիրությունների՝ լեռնային բնակչության շրջանում Si-ի ընդունումը կազմում է 24,0 - 27,7 մգ/օր: Այդ աշխատանքների վերլուծությունների արդյունքում արձանագրվել է նշանակալի կապ պլազմայում Si-ի մակարդակի (մեդիանայի արժեքը՝ 152,3 մկգ/լ) և սննդում ու խմելու ջրում այս էլեմենտի ընդհանուր պարունակության, այդ թվում բիոհասանելի քանակների միջև: Միևնույն ժամանակ հակադարձ կապ է հաստատվել պլազմայում Si-ի մակարդակի և տարիքի միջև [35]: Համաձայն մեկ այլ հետազոտության դիտվել Si-ի միջին ընդունումը Կորեայի բնակչության շրջանում տղամարդկանց դեպքում կազմել է 22,8 մգ/օր, իսկ կանանց դեպքում՝ 19,3 մգ/օր՝ առանց տարիքով պայմանավորված էական տարբերությունների: Si-ի ընդունումն ամենաբարձրն է եղել բանջարեղենից, որին հաջորդել են հացահատիկները, ըմպելիքները և մրգերը: Ինչ վերաբերում է սննդակարգով Si-ի ընդունման և մեզոլ Si-ի արտազատման փոխհարաբերությանը, ապա զգալի դրական հարաբերակցություն է հայտնաբերվել տղամարդկանց, բայց ոչ կանանց շրջանում: Si-ի արտազատումը տղամարդկանց շրջանում ավելի շատ է եղել (9,8 մգ/օր), քան կանանց շրջանում (9,3 մգ/օր), իսկ տարիքին զուգընթաց զգալիորեն ավելացել է միայն կանանց շրջանում [25]:

Si-ի նշանակությունը մարդու առողջության համար ներկայումս հաստատվում է մեծ թվով հետազոտությունների ապացույցներով [33, 40, 14]: Համաձայն մի շարք հետազոտությունների Si-ը սննդային քանակներով բարենպաստ ազդեցություն ունի ոսկրային համակարգի, մաշկի, մազերի և եղունգների վրա, ինչպես նաև Ալցհեյմերի հիվանդության զարգացման կանխարգելման դեպքում [28, 22, 16, 4, 31]:

Օստեոպորոզը 21-րդ դարի լուռ համաճարակ է, որի տարածվածությունն ավելանում է ամբողջ

աշխարհում: Ոսկրերում նյութափոխանակության վրա ազդող գործոնների բացահայտումը առաջնային նշանակություն ունի այս ախտաբանության կանխարգելման և բուժման համար: Մտուռը որոշիչ նշանակություն ունի ոսկրերի առողջության համար, սակայն որոշ սննդանյութերի և հանքային տարրերի ազդեցությունը, բացի կալցիումից, քիչ է բացահայտված: Վերջին 30 տարվա ընթացքում կուտակված ապացույցները վճռականորեն ցույց են տալիս, որ սննդային սիլիցիումը օգտակար է ոսկրերի և շարակցական հյուսվածքի համար [28, 19]: Ռ. Ջուզդառոշինզը և այլք իրենց աշխատանքներում արձանագրել են ուժեղ դրական կապեր դիտվել Si-ի ընդունման և ոսկրերի հանքային խտության միջև: Սիլիցիումի ճշգրիտ կենսաբանական դերը ոսկրերի առողջության դեպքում դեռևս պարզ չէ, թեև առաջարկվել են մի շարք հնարավոր մեխանիզմներ [19]: Սիլիցիումի ազդեցության հավանական մեխանիզմը հետևյալն է. այն առաջացնում է կայուն կոմպլեքս միացություններ պոլիոլների հետ, որն ազդում է գլիկոզամինոգլիկանների, մուկոպոլիսախարիդների և կոլագենի ձևավորման և/կամ օգտագործման վրա շարակցական հյուսվածքում և ոսկրերում [26]: Բացի դրանից, սիլիցիումը կարող է ազդել այլ հանքային տարրերի կլանման, պահպանման և փոխանակության վրա (օրինակ՝ ալյումին, պղինձ, մագնեզիում) [16, 10, 24]: Համաձայն որոշ հետազոտությունների՝ սննդային Si-ը պայմանավորում է ոսկրերի հանքային խտությունը կանացի շրջանում պրեմենոպաուզալ, բայց ոչ պոստմենոպաուզալ շրջանում, և որ էստրոգենի կարգավիճակը կարևոր է Si փոխանակության դեպքում ոսկրերի առողջության համար [28]: Ըստ մեկ այլ հետազոտության որոշվել է Si-ի կոնցենտրացիան մարդկանց դեգեներացված միջողնաշարային սկավառակներում, հաստատվել է ուժեղ կապ Si-ի և Al-ի միջև նշված հյուսվածքներում: Հեղինակները նշում են, որ իրենց աշխատանքների արդյունքները կարող են լուրջ հիմք դառնալ մարդու օրգանիզմում Si-ի և Al-ի փոխազդեցության մեխանիզմը պարզաբանելու համար, քանի որ հայտնի է այն պնդումը, թե Si -ը սահմանափակում է Al -ի տոքսիկությունը [52]:

Համաձայն ավելի վաղ կատարված որոշ ուսումնասիրությունների՝ Si-ը կարող է կարգավորիչ ազդեցություն ունենալ օրգանիզմի կողմից տրվող իմունային կամ բորբոքային պատասխանների վրա [46, 32]:

Որոշ գիտնականներ դեռևս 1996թ. հայտնում էին, որ խմելու ջրում Al-ի պարունակության և կոգնիտիվ խանգարումների միջև կապը շատ բանով պայմանավորված է ջրում Si-ի պարունակությամբ

և խտությամբ [17]: Ալյումինիումի բարձր մակարդակները վնասակար ազդեցություն են թողնում կոզնիտիվ առողջության վրա, երբ սիլիցիումի կոնցենտրացիաները ցածր են, իսկ բարձր կոնցենտրացիաները կանխում են նման ազդեցության զարգացումը: Ենթադրվում է, որ սիլիցիումի ակնհայտ դրական ազդեցությունը կոզնիտիվ առողջության վրա պայմանավորված է սիլիցիումի, հատկապես սիլիկաթվի և Al-ի միացությունների փոխազդեցությամբ և արդյունքում ալյումինասիլիկատների առաջացմամբ [16]: Ալյումինասիլիկատների առաջացումը կանխում է Al-ի աբսորբցիան՝ դրանով իսկ կանխելով օրգանիզմում այս էլեմենտի քոնսիկական կուտակումը, որը կարող է առաջացնել կամ սրել ուղեղի նեյրոդեգեներացիան [16, 9]: Սիլիցիումը ոչ միայն նվազեցնում է Al-ի կլանումը աղիքներում, այլև հեշտացնում է դրա արտազատումը երիկամների միջոցով: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սիլիցիումով հարուստ հանքային ջրի երկարատև օգտագործումը զգալիորեն նվազեցնում է Al-ով օրգանիզմի բեռնվածությունը [8]:

Գրականության ավելի վաղ տվյալները վկայում են նաև սիլիցիումի բարենպաստ ազդեցության մասին սրտանոթային խնդիրների դեպքում: Այսպես՝ Կ. Սչվարզն արձանագրել է հակադարձ կապ խմելու ջրում սիլիցիումի կոնցենտրացիայի և Ֆիլանդիայում սրտանոթային հիվանդություններից մահվան դեպքերի միջև: Նա առաջարկել է, որ սննդակարգում և խմելու ջրում սիլիցիումի պակասը կարող է հանգեցնել հիվանդության պատճառաբանությանը, մինչդեռ բավարար քանակները կամ ավելցուկը կարող է խանգարել հիվանդության զարգացմանը [47]: Նման ասոցիացիաներ փորձարարական հետազոտությունների արդյունքում հաղորդում են նաև այլ հեղինակներ [6, 29]: Այս բացահայտումները ցույց են տալիս սննդային սիլիցիումի պոտենցիալ դերը անոթների առողջության համար, թեև մեխանիզմը պարզ չէ: Սակայն մեկ այլ փորձարարական հետազոտության արդյունքում հեղինակները եզրակացրել են, որ սննդային սիլիցիումը որևէ ազդեցություն չունի աթերոսկլերոզի զարգացման և անոթների առողջության վրա [21]:

Այնուամենայնիվ, սիլիցիումի հատուկ կենսաքիմիական կամ ֆիզիոլոգիական գործառնությունները, եթե այդպիսիք կան, հիմնականում անհայտ են, թեև ընդհանուր առմամբ կարծում են, որ կան: Արդյունքում մեծանում է հետաքրքրությունը մարդու առողջության վրա ջրում լուծվող սիլիցիումի պոտենցիալ թերապևտիկ ազդեցության նկատմամբ: Առաջարկվել է, որ սիլիցիումը նշանակալի դեր կարող

է ունենալ եղունգների, մազերի և մաշկի կառուցվածքային ամբողջականության, կոլագենի ընդհանուր սինթեզի, ոսկրերի հանքայնացման, ոսկրերի և իմունային համակարգի առողջության, ինչպես նաև Ալցհեյմերի հիվանդության և աթերոսկլերոզի զարգացման ռիսկի նվազեցման մեջ [30]:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի սիլիցիումի կիրառման հնարավորությունը օստեոպորոզի կանխարգելման և բուժման խնդիրներում: Այս մասին են վկայում ոչ միայն փորձարարական հետազոտությունների արդյունքները, այլև մարդկանց շրջանում իրականացված դիտարկումները: Այսպես՝ բազմաթիվ մարդկանց (2847 մասնակից) խմբում օստեոպորոզի ուսումնասիրությամբ արձանագրվել է դրական կորելյացիոն կապ օրգանիզմ անցած սիլիցիումի քանակների և ոսկրերի հանքային խտության միջև տղամարդկանց շրջանում, իսկ կանաց դեպքում՝ մինչև մենոպաուզան [22]: *In vitro* հետազոտությունների արդյունքում ցույց է տրվել, որ մարդու ոսկրային հյուսվածքում Si-ը կարող է դիտվել որպես անաբոլիկ գործընթացների ակտիվության մշտական ֆիզիոլոգիական պոզիտիվ մոդուլյատոր [7]:

Մի շարք գիտնականների կողմից կատարվել է վերլուծական հետազոտություն (ամփոփվել են 8 ուսումնասիրություններ՝ ընդհանուր 10012 մասնակիցներով)՝ պարզելու սննդային սիլիցիումի և այն պարունակող հավելումների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև այն օրական դեղաչափերը, որոնք բարենպաստ ազդեցություն կարող են թողնել մարդկանց շրջանում ոսկրերի հանքային խտության վրա: Հետազոտության արդյունքում ենթադրվել է, որ Si-ի օրական 25 մգ-ը բարենպաստ ազդեցություն է թողնում ոսկրերի վրա: Si-ի սննդային հավելումների դեպքում ազդրային ոսկրի հանքային խտության վրա ավելի բարենպաստ ազդեցություն ունի օրթոսիլիկաթվի (6 մգ), կալցիումի և D վիտամին կոմբինացված բուժումը, քան միայն կալցիումի և D վիտամինի կիրառումը [43]: Նման հետազոտություն է կատարվել պոստմենոպաուզալ շրջանում գտնվող 70 կանանց շրջանում, որոնց դեպքում արձանագրվել է ոսկրային ցածր խտություն առանց օստեոպորոզի: Նրանց մի մասը 12 շաբաթվա ընթացքում օգտագործել է սիլիցիումով հարուստ (86 մգ/լ) արտեզյան ջուր, իսկ մյուս մասը մաքրման ենթարկված շշալցված ջուր՝ առանց սիլիցիումի էական պարունակության: Մեզում որոշելով Si-ի քանակները, ինչպես նաև արյան պլազմայում ոսկրային մետաբոլիզմի մարկերները՝ եկել են այն եզրակացության, որ սիլիցիումով հարուստ արտեզյան ջուրը անվտանգ և արդյունավետ միջոց

Ե օրգանիզմը հեշտ յուրացվող մենդային Si-ով ապահովելու համար, և այն կարող է այլընտրանքային դեղամիջոց լինել օստոպորոզի կանխարգելման և բուժման դեպքում [51]:

Մասնագիտական գրականության մեջ կան տվյալներ, որոնք վկայում են Si-ի՝ որպես հնարավոր թերապևտիկ միջոցի կիրառման մասին Ալցհեյմերի հիվանդության դեպքում, քանի որ այն հանդես է գալիս որպես այլումինիումի հակաթույն՝ նվազեցնելով վերջինիս նեյրոտոքսիկ ազդեցությունը [16]:

Մի շարք հեղինակներ հայտնում են, որ հիպերտոնիայի դեպքում սիլիցիում պարունակող հավելումների ընդունումը նվազեցնում է զարկերակային ճնշման ցուցանիշները: Նրանք նշում են, որ նման ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս էլեմենտը խթանում է մագնեզիումի ներքջային կլանումը և դրանով պայմանավորված գեների էքսպրեսիան աորտայում [29]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Si-ը պոտենցիալ կերպով նպաստում է անոթների ամբողջականության պահպանմանը անոթային տարիքային հիվանդությունների դեպքում [38]: Ենթադրվում է, որ այս դեպքում Si-ն ավելացնում է L-արգինինի կենսահասանելիությունը [6]: Այսպես՝ ինոզիտոլով ստաբիլիզացված արգինինի սիլիկատը (ASI) լավացնում է արգինինի և Si-ի արսորբցիան և կենսահասանելիությունը՝ դրանով իսկ նպաստելով ազոտի օքսիդի քանակի շատացմանը [11]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ASI-ի միանվագ դեղաչափը կիրառելուց արդեն վեց ժամ հետո նշանակալի բարձրանում է արգինինի մակարդակը պլազմայում [27]: Արդյունքում ազոտի օքսիդի բարձրացած հասանելիությունը առաջացնում է վազոդիլատացիա՝ մեծացնելով արյան հոսքը դեպի մկաններ, նվազեցնում է արյան ճնշումը, մեծացնում է ֆիզիկական աշխատունակությունը և լավացնում հիշողությունը [23, 49]: Արգինինի և Si-ի համատեղ կիրառումը խոստումնալից արդյունքներ է ցույց տվել երիտասարդների շրջանում կոգնիտիվ ֆունկցիաների լավացման հարցում [15]:

Ֆ.Չ. Սանչեզ-Մունիզը և այլք իրենց աշխատանքում նշում են, որ արևմտյան երկրներում դեգեներատիվ հիվանդությունների տարածվածությունը շատացել է: Գիտական տվյալներն ապացուցում են, որ դեմենցիան և կոգնիտիվ այլ խանգարումները պայմանավորված են նաև շրջակա միջավայրի, ներառյալ սննդի և իր բաղադրիչների գործոններով: Հայտնի է միջերկրածովյան սննդակարգի բարենպաստ ազդեցությունը տարբեր հիվանդություններով, այդ

թվում նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ռիսկի նվազմամբ պայմանավորված: Գարեջուրը՝ որպես այդ սննդակարգի բաղադրիչ պարունակում է սիլիցիում, որը կարող է մեծ դեր ունենալ ուղեղային խանգարումների կանխարգելման խնդրում: Այս աշխատանքում անդրադարձ է կատարվել միջերկրածովյան սննդակարգի և մասնավորապես գարեջրի սպառման ու նյարդաբանական խնդիրների հնարավոր կապին: Աշխատանքն ավարտվում է այն ամփոփմամբ, որ ոչ ակտիվության գարեջրի չափավոր սպառումը կարող է հանդես գալ որպես պոտենցիալ միջոց՝ նեյրոդեգեներատիվ հիվանդություններից խուսափելու համար [45]:

Արևմտյան երկրների մեծ մասի բնակչության շրջանում դիետիկ Si-ի օգտագործման քանակները կազմում են 20-50 մգ/օր, որը երկու և ավելի անգամ ավելի շատ է, քան երկաթի և ցինկի ընդունումը: Ավելի շատ քանակների (140-204 մգ/օր) ընդունում արձանագրվել է Չինաստանում և Հնդկաստանում, որտեղ սննդակարգում գերակշռում է բուսական սնունդը [19]: Ներկայումս Si-ի օգտագործման աղեկվատ և առավելագույն թույլատրելի մակարդակները դեռևս հաստատված չեն [33]: Հաշվի առնելով մարդկանց և կենդանիների վրա կատարված հետազոտությունների արդյունքները՝ որոշ գիտնականների կողմից առաջարկվել է Si-ի սննդով օգտագործման քանակը մոտ 25 մգ/օր, որը բարենպաստ ազդեցություն կունենա ոսկրերի վրա [43, 44]: Նշենք նաև, որ 2003թ. Մեծ Բրիտանիայի վիտամինների և հանքային տարրերի գծով փորձագիտական խումբը, հիմք ընդունելով սիլիցիումի կենսաբանական ազդեցության վերաբերյալ բոլոր հայտնի տվյալները, որոշել է խմելու ջրով, սննդով և սննդային հավելումներով սիլիցիումի օրգանիզմ անցման առավելագույն անվտանգ քանակը, այն է՝ 13 մգ/կգ օրվա ընթացքում չափահաս մարդու (60 կգ զանգվածի հաշվով) դեպքում [12]:

Առողջության վրա Si-ի բարենպաստ ազդեցությունից բացի գրականության մեջ քննարկվում են նաև խնդիրներ օրգանիզմում այս էլեմենտի անբարենպաստ ազդեցության վերաբերյալ: Վաղուց է հայտնի, որ Si պարունակող փոշին կարող է նպաստել սիլիկոզի զարգացմանը, և եթե այս դեպքում ինհալացիոն ճանապարհով օրգանիզմ անցնող այս էլեմենտի միացությունների վնասակար ազդեցությունը կասկած չի հարուցում, ապա էստերալ ճանապարհով ներմուծված Si-ի տոքսիկ ազդեցության մասին կարծիքները տարբեր են: Խոսքը առաջին հերթին վերաբերում է ռուս հեղինակներին՝ խմելու ջրի հիգիենայի ոլորտում կատարած հետազոտություններին: Նրանց աշխատանքները նվիրված են եղել Չուվաշիայի սիլիկո-

նային կենսաքիմիական գավառում բնակչության շրջանում աշխարհագրական ախտաբանության պատճառահետևանքային կապերի ուսումնասիրմանը և գնահատմանը: Այդ աշխատանքներում ցույց է տրվել խմելու ջրում Si-ի մեծ քանակների և միաժամանակ նրանում միկրոէլեմենտների ու մակրոէլեմենտների արտահայտված դիսբալանսով պայմանավորված հնարավոր ազդեցությունը բնակչության շրջանում զարկերակային հիպերտենզիայի, սրտի իշեմիկ հիվանդության, շաքարային դիաբետի, լեղաքարային հիվանդության և ուրոլիթիազի տարածվածության վրա [2]: Արևմտյան երկրներում Si-ի կենսաբանական ազդեցության վերաբերյալ կատարված ուսումնասիրություններում, ինչպես երևում է վերը նշված վերլուծության մեջ, չեն հաստատվում խմելու ջրում Si-ի տոքսիկությունը կենդանիների և մարդկանց համար:

Ինչ վերաբերում է խմելու ջրում Si-ի սահմանային թույլատրելի խտությանը (ՍԹԽ), ապա այն չի նորմավորվում ինչպես ԱՅԿ-ի, այնպես էլ Եվրամիության՝ խմելու ջրի որակի վերաբերյալ ուղեցույցներում, ինչպես նաև տարբեր երկրների (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Չինաստան և այլն) ազգային նորմատիվային փաստաթղթերում: Ավստրալիայում խմելու ջրի որակի ուղեցույցում կա Si-ի վերաբերյալ նորմատիվ՝ 80 մգ/լ, որը հաստատվել է՝ պայմանավորված զուտ տեխնոլոգիական պատճառներով, քանի որ ջրում ավելի շատ պարունակության դեպքում Si-ը կարող է սպիտակ մնացորդային նստվածք առա-

ջացնել ապակու և մետաղական մակերեսների վրա: Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներում Si-ը նորմավորվում է ըստ սանիտարաթունաբանական ցուցանիշի. ՍԹԽ-ի արժեքը կազմում է 10 մգ/լ: Հավելենք, որ որոշ ռուս գիտնականներ առաջարկում են նորմատիվային փաստաթղթերում չեղարկել Si-ի ՍԹԽ-ն [1]:

Այսպիսով, գրականության աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս գիտական շրջանակներում մեծանում է հետաքրքրությունը Si-ի նկատմամբ: Այդ հետազոտությունները վկայում են, որ այս էլեմենտն իր սննդային քանակներով կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ մարդու առողջության վրա, չնայած սիլիցիումի հատուկ կենսաքիմիական կամ ֆիզիոլոգիական գործառնությունները հիմնականում անհայտ են: Այնուամենայնիվ, Si-ի օգտագործման ադեկվատ և առավելագույն թույլատրելի մակարդակները հաստատելու և խմելու ջրում այս էլեմենտի նորմավորումը հիմնավորելու նպատակով անհրաժեշտ է շարունակել ուսումնասիրությունները, մասնավորապես համաճարակաբանական հետազոտությունների արդյունքում պարզել առանձին տարածաշրջաններում խմելու ջրում սիլիցիումի մակարդակները, օրգանիզմ անցնող սննդային քանակները և այդ մակարդակների հնարավոր կապը տարբեր հիվանդությունների տարածվածության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Мазаев В.Т., Шлеппина Т.Г. Оценка степени санитарной опасности соединений кремния в природной и питьевой воде (в порядке обсуждения). // Водоснабжение и санитарная техника, 2011; (7): 13–20
2. Рахманин Ю.А., Егорова Н.А., Красовский Г.Н., Михайлова Р.И., Алексеева А.В. Кремний, его биологическое действие при энтеральном поступлении в организм и гигиеническое нормирование в питьевой воде. Обзор литературы. Гигиена и санитария, 2017; 96(5): 492–498. DOI: <http://dx.doi.org/10.18821/0016-9900-2017-96-5-492-498>
3. Тутельян В.А. и др. Научные оновы здорового питания //Москва, 2010, с. 126–161
4. Barel A., Calomme M., Timchenko A. et al. Effect of oral intake of choline-stabilized orthosilicic acid on skin, nails and hair in women with photodamaged skin. //Arch. Dermatol. Res., 2005, 297, 147–153. [CrossRef] [PubMed]
5. Bissé E., Epting T., Bell A., Lindinger G., Lang H., Wieland H. Reference values for serum silicon in adults. //Anal Biochem., 2005;337:130–5
6. Buffoli B., Foglio E., Borsani E. et al. Silicic acid in drinking water prevents age-related alterations in the endothelium-dependent vascular relaxation eNOS and AQP1 expression in experimental mice: an immunohistochemical study. //Acta Histochem., 2013;115:418–24
7. Costa-Rodrigues J., Reis S., Castro A., Fernandes M.H. Bone Anabolic Effects of Soluble Si: In Vitro Studies with Human Mesenchymal Stem Cells and CD14 + Osteoclast Precursors. Stem. Cells Int., 2016; 2016: 5653275
8. Davenward S., Bentham P. et al. Silicon-rich mineral water as a non-invasive test of the 'aluminum hypothesis' in Alzheimer's disease. J. Alzheimers Dis., 2013; 33:423–430CAS Google Scholar
9. Domingo J.L., Gómez M., Colomina M.T. Oral silicon supplementation: an effective therapy preventing oral aluminum absorption and retention in mammals. Nutr. Rev., 2011;69:41–51
10. Emerick R., Kayongo-Male H. Silicon facilitation of copper utilization in the rat. J. Nutr. Biochem., 1990;1:487–92
11. Evans M.; Zakaria N. et al. An Evaluation of the Effects of Inositol-Stabilized Arginine Silicate (ASI; Nitrosigine®) in Preventing the Decline in Cognitive Function Caused by Strenuous. In Proceedings of the 2018 International Society of Sports Nutrition Conference, Clearwater Beach, FL, USA, 7–9 June 2018; Available online: <https://blog.priceplow.com/wp-content/uploads/nitrosigine-preventing-cognitive-decline-caused-by-strenuous-exercise.pdf> (accessed on 20 April 2019)
12. Expert Group on Vitamins and Minerals. Safe upper levels for vitamins and minerals. London: Food Standards Agency; 2003
13. Farooq M.A., Dietz K.-J. Silicon as Versatile Player in Plant and Human Biology: Over looked and poorly Understood. Front. Plant Sci., 2015; (6): 1–14
14. Garneau A.P., Carpentier G.A., Marcoux A.A. et al. Aquaporins mediate silicon transport in humans. PLoS ONE 2015, 10, e0136149. [CrossRef]
15. Gills J.L., Campitelli A. et al. Acute Inositol-Stabilized Arginine Silicate Improves

- Cognitive Outcomes in Healthy Adults Nutrients, 2021 Dec; 13(12): 4272. Published online 2021 Nov 26. doi: 10.3390/nu13124272
16. Guyonnet S.G., Andrieu S., Vellas B. The potential influence of silica present in drinking water on Alzheimer's disease and associated disorders. *J. Nutr. Health Aging*, 2007;11:119-24
 17. Jacqmin-Gadda H., Commenges D., Letenneur L., Dartigues J.-F. Silica and aluminum in drinking water and cognitive impairment in the elderly. *Epidemiology*, 1996;7:281-5
 18. Jugdaohsingh R., Anderson S.H.C., Lakasing L. et al. Serum silicon concentrations in pregnant women and newborn babies. *Br. J. Nutr.*, 2013;110:2004-2010. [PubMed] [Google Scholar]
 19. Jugdaohsingh R., Anderson S.H., Tucker K.L., Elliott H., Kiel D.P., Thompson R.P.H. et al. Dietary silicon intake and absorption. *Am. J. Clin. Nutr.*, 2002;75:887-93
 20. Jugdaohsingh R., Calomme M.R., Robinson K., Nielsen F., Anderson S.H.C., D'Haese P., Geusens P., Loveridge N., Thompson R.P.H., Powell J.J. Increased longitudinal growth in rats on a silicon-depleted diet. *Bone* 43: 596-606, 2008. doi:10.1016/j.bone.2008.04.014
 21. Jugdaohsingh R., Kessler K., Messner B. et al. Dietary Silicon Deficiency Does Not Exacerbate Diet-Induced Fatty Lesions in Female ApoE Knockout Mice *1J. Nutr.*, 2015 Jul; 145(7): 1498-1506. Published online 2015 May 13. doi: 10.3945/jn.114.206193
 22. Jugdaohsingh R.; Tucker K.L. et al. Dietary silicon intake is positively associated with bone mineral density in men and premenopausal women of the Framingham Offspring cohort. *J. Bone Min. Res.*, 2004, 19, 297-307. [CrossRef]
 23. Kalman D., Harvey P.D., Ojalvo S.P., Komorowski J. Randomized Prospective Double-Blind Studies to Evaluate the Cognitive Effects of Inositol-Stabilized Arginine Silicate in Healthy Physically Active Adults. *Nutrients* 2016, 8, 736. [Google Scholar] [CrossRef]
 24. Kikunaga S., Kitano T., Kikukawa T., Takahashi M. Effects of fluoride and silicon on distribution of minerals in the magnesium-deficient rat. *Maguneshumu* 1991;10:181-91
 25. Kim Y.Y., Kim M.H., Choi M.K. Relationship Between Dietary Intake and Urinary Excretion of Silicon in Free-Living Korean Adult Men and Women. 2019 Oct;191(2):286-293. doi: 10.1007/s12011-018-1619-0. Epub 2019 Jan. 2
 26. Kinrade S.D., Del Nin J.W. et al. Stable five- and six-coordinated silicate anions in aqueous solution. *Science* 1999;285:1542-5
 27. Komorowski J., Ojalvo S.P. A Pharmacokinetic Evaluation of the Duration of Effect of Inositol-Stabilized Arginine Silicate and Arginine Hydrochloride in Healthy Adult Males. *FASEB J.* 2016, 30, 690.17. [Google Scholar]
 28. Macdonald H.M., Hardcastle A.E., Jugdaohsingh R., Reid D.M., Powell J.J. Dietary silicon interacts with oestrogen to influence bone health: evidence from the Aberdeen Prospective Osteoporosis Screening Study. *Bone*. 2012;50:681-687. [PubMed] [Google Scholar]
 29. Maehira F., Motomura K. et al. Soluble silica and coral sand suppress high blood pressure and improve the related aortic gene expressions in spontaneously hypertensive rats. *Nutr. Res.*, 2011;31:147-56
 30. Martin K.R. Silicon: the health benefits of a metalloid. *Met. Ions. Life Sci.*, 2013; (13): 451-73. doi: 10.1007/978-94-007-7500-8_14
 31. Michalak M., Pierzak M., Kręcis B., and Suliga E. Bioactive Compounds for Skin Health: A Review *Nutrients*, 2021 Jan; 13(1): 203. Published online 2021 Jan 12. doi: 10.3390/nu13010203
 32. Nielsen F.H. A novel silicon complex is as effective as sodium metasilicate in enhancing the collagen-induced inflammatory response of silicon-deprived rats. *J. Trace Elem. Med. Biol.*, 2008;22:39-49
 33. Nielsen F.H. Update on the possible nutritional importance of silicon. *J. Trace Elem. Med. Biol.*, 2014, 28, 379-382. [Google Scholar] [CrossRef]
 34. Opinion of the Panel on Food Additives and Nutrient Sources added to Food on calcium silicate, silicon dioxide and silicic acid gel added for nutritional purposes to food supplements following a request from the European Commission. *The EFSA Journal*. 2009; 1132: 1-24
 35. Prescha A., Zablocka-Słowińska K., and Grajeta H. Dietary Silicon and Its Impact on Plasma Silicon Levels in the Polish Population//*Nutrients*, 2019 May; 11(5): 980. Published online 2019 Apr 29. doi: 10.3390/nu11050980
 36. Prescha A., Zablocka-Słowińska K.A., Placzowska S. et al. Silicon intake and plasma level and their relationship with systemic redox and inflammatory markers in rheumatoid arthritis patients. *Adv. Clin. Exp. Med.*, 2019, 28.ahead of print. [CrossRef]
 37. Price C.T., Koval K.J., Langford J.R. Silicon: A Review of Its Potential Role in the Prevention and Treatment of Postmenopausal Osteoporosis. *Int. J. Endocrinol.*, 2013; 2013: 316783
 38. Proctor S.D., Kelly S.E., Vine D.F., Russell J.C. Metabolic effects of a novel silicate inositol complex of the nitric oxide precursor arginine in the obese insulin-resistant JCR:LA-cp rat. *Metabolism*, 2007, 56, 1318-1325. [Google Scholar] [CrossRef]
 39. Pruksa S., Siripinyanond A., Powell J.J. & Jugdaohsingh R. Silicon balance in human volunteers; a pilot study to establish the variance in silicon excretion versus intake. *Nutr. Metab., Lond.*, 11, 4, 2014
 40. Ratcliffe S., Jugdaohsingh R. et al. Identification of a mammalian silicon transporter. *Am. J. Physiol. Cell Physiol.*, 2017;312:C550-C561. doi: 10.1152/ajpcell.00219.2015. [PMC free article] [PubMed] [CrossRef] [Google Scholar]
 41. Robberecht H., Van Cauwenbergh R., Van Vlaslaer V., Hermans N. Dietary silicon intake in Belgium: sources, availability from foods, and human serum levels. *Sci. Total Environ*, 2009;407:4777-82
 42. Rodella L.F., Bonazza V., Labanca M., Lonati C., Rezzani R. A review of the effects of dietary Silicon intake on bone homeostasis and regeneration. *J. Nutr. Health Aging*, 2014, 18, 820-826. [Google Scholar] [CrossRef] [PubMed]
 43. Rondanelli M., Faliva M.A. et al. A neglected micronutrient essential for bone health. *Exp. Biol. Med.*, 2021, 246, 1500-1511. [Google Scholar] [CrossRef]
 44. Rondanelli M., Faliva M.A. et al. Nutrition, Physical Activity, and Dietary Supplementation to Prevent Bone Mineral Density Loss: A Food Pyramid *Nutrients*, 2022 Jan 14(1): 74
 45. Sánchez-Muniz F.J., Macho-González A., Garcimartín. A. et al. The Nutritional Components of Beer and Its Relationship with Neurodegeneration and Alzheimer's Disease //*Nutrients*, 2019 Jul; 11(7): 1558. Published online 2019 Jul 10. doi: 10.3390/nu11071558
 46. Seaborn C.D., Briske-Anderson M., Nielsen F.H. An interaction between dietary silicon and arginine affects immune function indicated by Con-A-induced DNA synthesis of rat splenic T-lymphocytes. *Biol. Trace Elem. Res.*, 2002;87:133-42
 47. Schwarz K. Silicon, fibre, and atherosclerosis. *Lancet*, 1977;1:454-7
 48. Sripanyakorn S., Jugdaohsingh R., Dissayabutr W., Anderson S.H.C., Thompson R.P.H., Powell J.J. The comparative absorption of silicon from different foods and food supplements. *Br. J. Nutr.*, 2009;102:825-34
 49. Sylla S., Ojalvo S.P., Komorowski J. An Evaluation of the Effect of Inositol-Stabilized Arginine Silicate on Heart Rate and Blood Pressure. *FASEB J.*, 2018, 32, 724. 12. [Google Scholar] [CrossRef]
 50. Van Dyck K., Robberecht H., Van Cauwenbergh R., Van Vlaslaer V., Deelstra H. Indication of silicon essentiality in humans. Serum concentrations in Belgian children and adults, including pregnant women. *Biol Trace Elem. Res.*, 2000;77:25-32. [PubMed] [Google Scholar]
 51. Zhaoping Li, Hannah Karp et al. Absorption of silicon from artesian aquifer water and its impact on bone health in postmenopausal women: a 12 week pilot study *Nutr. J.*, 2010; 9: 44. Published online 2010 Oct 14. doi: 10.1186/1475-2891-9-44
 52. Ziola-Frankowska A., Kubaszewski L. et al. Interrelationship between silicon, aluminum, and elements associated with tissue metabolism and degenerative processes in degenerated human intervertebral disc tissue. //*Environ Sci. Pollut. Res. Int.*, 2017; 24(24): 19777-19784. Published online 2017 Jul. doi: 10.1007/s11356-017-9588-y

РЕЗЮМЕ

ВОЗМОЖНОЕ БЛАГОПРИЯТНОЕ ВЛИЯНИЕ КРЕМНИЯ НА ЗДОРОВЬЕ

Котанян А.О.¹, Мкртчян А.М.¹, Котанян М.О.²

¹ЕГМУ, Кафедра гигиены и экологии

²Национальный центр по контролю и профилактике заболеваний МЗ РА, ГНКО

Ключевые слова: кремний, биологическое действие, питьевая вода, продукты питания, гигиеническое нормирование.

Кремний (Si) – один из самых распространенных элементов в земной коре, в различных количествах Si всегда присутствует в воде и продуктах питания. Больше количество Si содержится в продуктах растительного происхождения. Около 20% из общего количества поступившего в организм с пищей и водой кремния приходится на долю питьевой воды и напитков (в том числе пива, содержащего в среднем 20–25 мг/л кремния). Для высших животных и человека кремний обычно не считается эссенциальным питательным веществом. Однако важность этого элемента для здоровья человека в настоящее время подтверждается растущим количеством научных данных. Биологическая роль кремния в организме человека до конца не выяснена, но считается, что он необходим для процессов минерализации костной ткани, синтеза коллагена, может играть значительную роль в поддержании структурной целостности ногтей, волос и кожи, а также способствует предупреждению атеросклероза и болезни

Альцгеймера. У населения большинства западных стран среднее поступление кремния с пищей и водой составляет 20–50 мг/день. Помимо положительного влияния Si на здоровье, в литературе обсуждаются и вопросы, касающиеся неблагоприятного действия этого элемента на организм. В первую очередь это отмечают российские авторы, имеющие отношение к исследованиям в области гигиены питьевой воды. В настоящее время еще не установлены адекватные и максимально допустимые уровни потребления Si. С учетом результатов исследований на людях и животных некоторые ученые предлагают потребление Si с пищей порядка 25 мг/сут. Что касается предельно допустимой концентрации (ПДК) Si в питьевой воде, то элемент не нормируется ни в Руководстве ВОЗ по качеству питьевой воды, ни в Директивах ЕС, ни в национальных нормативных документах разных стран мира. В Российской Федерации, как и в Республике Армения, в гигиенических требованиях к качеству питьевой воды Si нормируется по санитарно-токсикологическому показателю, значение ПДК составляет 10 мг/л.

SUMMARY

POSSIBLE BENEFICIAL EFFECTS OF SILICON ON HEALTH

Kotanyan A.H.¹, Mkrtchyan A.M.¹, Kotanyan M.H.

¹YSMU, Department of Hygiene and Ecology

²National Center for Disease Control and Prevention, MoH of RA, SNCO

Keywords: silicon, biological effect, drinking water, foods, hygienic standardization.

Silicon is one of the most common elements in the earth's crust. It is always present in water and food in varying amounts. Higher amounts of Si are found in plant-based foods. About 20% of the total amount of silicon ingested with food and water comes with drinking water and drinks (including beer, which contains in average 20–25 mg/l of silicon). For higher animals and humans, silicon is generally not considered to be an essential nutrient. However, the importance of this element for human health is now supported by increasing research evidence. The biological role of silicon in human organism is still not clear, but it assumed to be necessary for processes of bone mineralization, collagen synthesis. It has a positive effect on the skin, hair, and nails, contributes to the prevention of atherosclerosis and Alzheimer disease. In the population of most Western countries, dietary Si intakes range from 20 to 50 mg/day. In addition to

the beneficial effect of Si on health, questions regarding the adverse effect of this element on the body are also discussed in the literature. First of all, we are talking about the Russian authors' researches in the field of drinking water hygiene. At present, the adequate and maximum admissible levels of Si consumption have not yet been established. Taking into account the results of research on humans and animals, some scientists have suggested a dietary intake of Si of about 25 mg/day. As for the standards of silicon content in drinking water, it is not regulated in the drinking water quality guidelines of the WHO and the European Union, as well as in the national normative documents of different countries. In the Russian Federation, as well as in the Republic of Armenia, in the hygienic requirements for water quality, Si is normalized according to the sanitary-toxicological index, with the value of the maximum admissible concentrations in drinking water amounting to 10 mg/l.

<https://doi.org/10.56936/18291775-2023.35-63>

ՀՏԴ՝ 617-089:61(072):372.8

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՕՊԵՐԱՏԻՎ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Օրդույան Ս.Լ.¹, Հակոբյան Է.Կ.²

¹ԵՊԲՀ, տեղագրական անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոն

²ԵՊԲՀ, ընդհանուր բժշկության ֆակուլտետ

Ստացված է՝ 06.02.2023, գրախոսված է՝ 27.03.2023, ընդունված է՝ 28.04.2023:

Բանալի բառեր՝ վիրաբուժություն, գիտական խմբակ, գործնական հմտություն, տեսական գիտելիք, գիտական պեկոլոգում:

Վիրաբուժությունը՝ որպես բժշկական նեղ մասնագիտություն, հոգեբանորեն ամենածանր մասնագիտություններից մեկն է: Վիրաբույժը սթրեսի պայմաններում իրականացնում է բարդ գործողություններ՝ կատարելով նուրբ շարժումներ և վիրահատության ընթացքում կենտրոնանալով տեխնիկական մանրությունների վրա [7]: Որպես անհատներ՝ վիրաբույժները պետք է հարմարվեն իրավիճակային փոփոխվող պայմաններին և պահպանեն կլինիկական առողջ դատողություն՝ միաժամանակ արդյունավետորեն շփվելով վիրաբուժական անձնակազմի հետ՝ առավել արդյունքի հասնելու համար [2, 10]: Բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններում վիրաբուժության դասավանդումն առանցքային նշանակություն ունի ապագա վիրաբույժի մեջ անհրաժեշտ որակներ սերմանելու առումով, և ի տարբերություն բժշկական մյուս մասնագիտությունների՝ վիրաբուժության դասավանդումն ունի մի շարք առանձնահատկություններ [7]: Վերջին տասնամյակում վիրաբուժության դասավանդման մեթոդական բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններում ունեցել է զգալի փոփոխություններ, որոնք պայմանավորված են ինչպես բարձրագույն կրթության հեղափոխական առաջընթացով, այնպես էլ առողջապահության զարգացմամբ: Այդ փոփոխությունների ազդեցությամբ ներկայումս անհրաժեշտություն է դարձել մշակել այնպիսի սկզբունքներ, որոնց ներդրումը բակա-

լավրիատում վիրաբուժության դասավանդման մեջ այն կդարձնի առավել արդյունավետ և համահունչ ժամանակակից մարտահրավերներին [1]: Վիրաբուժության դասավանդման գործընթացում արդյունավետ մեթոդ եղել և մնում է հիվանդությունները և երևույթները ընկալելը և սեփական փորձով մեկնաբանելը [17], սակայն որոշ հետազոտություններում փաստվում է, որ կոգնիտիվ հմտությունները նույնպես անհրաժեշտություն են վիրաբույժի համար [18]: Այնուամենայնիվ, մտավոր աշխատանքն ուսուցման գործընթացում իրականանում է նյութի բազմակի կրկնություններով, առանց սոմատիկ շարժումների: Հետազոտություններում ցույց է տրվել նաև, որ այդ երկուսի մեկտեղումը մեծացնում է մտավոր աշխատանքի արդյունավետությունը [10]: Վիրաբուժական հմտությունները բացի կոգնիտիվ բաղադրիչից, սերտորեն կապված են նաև նյարդահոգեբանական գործոնների (ներառյալ բարդ տեսողական-տարածական կողմնորոշումը), սթրեսակայունության և հոգեմոտոր ֆունկցիաների հետ: Ստացվում է, որ գիտելիքների առկայությունն անհրաժեշտություն է, սակայն բավարար պայման չէ օպերատիվ տեխնիկաներ կիրառելու համար [10, 14]:

Չարգացած օպերատիվ տեխնիկաներ և հմտություններ ունենալը նույնպես միանշանակ չէ, առկա են բազմաթիվ ոչ տեխնիկական հմտություններ, որոնք անմիջականորեն կապ ունեն հետագա կլինիկական արդյունքի հետ: Ոչ տեխնիկական հմտություններից են սոցիալական և ճանաչողական այն բոլոր հմտությունները, որոնք կիրառելով՝ վիրաբույժը կարողանում է որոշումներ կայացնել և ճիշտ կողմնորոշվել վիրահատության ընթացքում: Հետևաբար վիրաբուժության՝ որպես առարկայի դասավանդման շրջանակներում շատ կարևոր է ապագա վիրաբույժների մեջ սերմանել ոչ տեխնիկական այդ բոլոր հմտությունները [15]: Վիրաբուժական ոչ տեխնիկական հմտություններ են իրավիճակային իրազեկվածությունը, որը հնարավորություն է տալիս ինչպես նախօրոք կանխատեսելու վիրա-

* ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵ

Ս.Լ. Օրդույան

ԵՊԲՀ, տեղագրական անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոն

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0025, Կորյունի 2

Էլ. փոստ՝ s_orduyan@mail.ru

Հեռ.՝ (+374) 91 43 87 18

հատության արդյունքները և բուժման հետագա ընթացքը, այնպես էլ օգնում է վիրաբույժին ընկալելու և լուծելու այն բոլոր խնդիրները, որոնք առկա են ինչպես հիվանդների, այնպես էլ վիրաբուժական թիմի անդամների շրջանում [19]: Իրավիճակային ճիշտ իրազեկվածությունն օգնում է հետագայում ճիշտ որոշումներ կայացնելու, որի հիմքում ինչպես ռացիոնալ վերլուծական գործընթացների թվայնալ անհամաչափ ռազմավարություններն են, այնպես էլ ինտուիտիվ օրինաչափությունների ճանաչողական ռազմավարությունները: Ռացիոնալ վերլուծությունների հիմքում տեսական նյութի ճիշտ ընկալումն է՝ տրամաբանական մտածողությունը, իսկ ինտուիտիվ օրինաչափությունները հիմքում փորձը [15, 19]:

Վիրաբույժի համար շատ կարևոր ոչ տեխնիկական հմտություններ են նաև հստակ խոսքը և հաղորդակցման կարողությունները, որոնք կարևոր են վիրաբուժական անվտանգության համար, քանի որ հաղորդակցման անկատարությունը կարող է վնաս հասցնել հիվանդին [11, 13]: Հետևաբար վիրաբուժական կադրերի պատրաստման գործում կարևոր է դառնում նաև խոսքի և հաղորդակցման հմտությունների ճիշտ դասավանդումը: Ճշգրիտ բազային հաղորդակցման հմտությունների առկայությունը վիրաբուժական թիմում մեծացնում է թիմի դինամիկան և հիվանդների բուժման արդյունքները: Վիրաբուժական թիմի անդամները մեծ արդյունավետությամբ կատարում են ինֆորմացիայի ճշգրիտ փոխանակություն, ստեղծում են փոխվստահության մթնոլորտ և կորդինացնում են բուժման գործընթացը [5, 19]: Որոշ հետազոտություններում ապացուցվել է, որ որպես ոչ տեխնիկական հմտություն՝ անհրաժեշտ է վիրաբույժի մեջ զարգացնել ղեկավարման կարողություն, որի հիմքում առկա է ինչպես ինքնավստահությունը, այնպես էլ կոգնիտիվ հնարավորությունները, մտածողությունը և այլն: Վիրաբուժության մեջ ղեկավարման հմտությունները կարելի է բնորոշել 3 հիմնական բաղադրիչներով՝ ռազմավարությամբ, միջանձնային որակներով և վիրաբուժական փորձով, իրացմամբ [19]: Վիրաբուժական թիմերում բանիմաց ղեկավարների առկայությունը նպաստում է անվտանգության և որակի լավացմանը, ինչպես նաև առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Առաջնորդությունը վիրաբուժական պրակտիկայում զարգացնելու համար անհրաժեշտ է սահմանել նոր չափանիշներ, զարգացնել նաև դրանք պահպանելու, թիմի անդամներին աջակցելու կարողություն [9, 16]:

Վիրահատարանում աշխատանքային հմտությունները և հարմարվողականությունը վիրա-

